Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԴԱՐՁՅԱԼ «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Առաջին ռուսահայ պարբերականի բանասիրական պատմությունը, պարբերական, որն իբր հրատարակվել է Աստրախանում և կրել է «Արևելյան ծանուցմունք» անունը, շատ էլ հին չէ: Հայկական պարբերական մամուլի պատմությամբ զբաղվողներից և ոչ մեկը, իսկ դրանց թվում կան Գ.Զարբհանալյանի, Ա. Ղազիկյանի, Գր. Գալեմքյարյանի, Ալ. Երիցյանի, Գ. Լևոնյանի նման մեծություններ, նման պարբերական չի տեսել և չի հիշատակել: Առաջին անգամ այս հարցին անդրադարձել է Գարեգին Լևոնյանն իր «Հայոց պարբերական մամու–լը» աշխատության առաջաբանում (Երևան, 1934, էջ 20, ի դեպ, ամեն անգամ պարբերա–կանը կոչելով «Ծանուցմանց շաբաթաթերթ»), սակայն իսկույն հավելել է, որ «Մենք չեն տե–սել այդ թերթը և չգիտենք նրա կյանքի տևողությունը»: Հասկանալի է, իհարկե, որ չտեսած թերթի մասին գրելիս, սխալներն ամենևին էլ հազվագյուտ չեն լինում:

Հարցը մանրակրկիտ քննության առարկա դարձավ 1957 թվականին, երբ «Սովե–տական գրականություն» ամսագիրը (№ 3) տպագրեց Վ. Ոսկանյանի և Վ. Գրիգորյանի «Ռուսահայոց առաջին պարբերական «Արևելյան ծանուցմունքը» » խորագիրը կրող հոդ–վածը: Հեղինակներն ապացուցում էին, որ Աստրախանում, տեղի գիմնազիայի ուսուցիչ Իոսիֆ ֆոն Վեյսքհոպֆենը ռուսերեն լեզվով հրատարակելով «Восточные известия» շաբա–թաթերթը, միաժամանակ սկսել է հրատարակել նաև հայերեն թերթ՝ «Արևելյան ծանուց–մունք» անվամբ: Եզրակացությունն արված է շատ որոշակի և առարկություն չհանդուրժող ձևով. «1816 թ. հունվարի սկզբներին լույս է ընծայվում «Արևելյան ծանուցմունքի» առաջին համարը» (էջ 172):

Եվ արդեն 1966 թվականին «Գրական թերթում» տպագրված «Ռուսահայ առաջին պարբերականը» խորագիրը կրող իր խանդավառ հոդվածով (1966 թ., № 3) պատմաբան Վ. Խաչատրյանը կրկին հավաստեց աստրախանյան հայալեզու թերթի՝ինչպես գոյության ան–վերապահ փաստը, այնպես էլ նրա լույս աշխարհ գալու տարին ու ամիսը: «Արևելյան ծա–նուցմունքը» ճանաչվեց որպես ռուսահայոց առաջին պարբերական:

Այդպե՞ս է արդյոք:

Մինչև բուն նյութին անցնելը՝ անդրադառնանք այն մի քանի անճշտություններին, որոնք սպրդել են Վ. Ոսկանյանի և Վ. Գրիգորյանի՝ ընդհանուր առմամբ օգտաշատ հոդ–

վածի մեջ: Սա առավել ևս անհրաժեշտ է, որովհետև վերոհիշյալ հարցի վերաբերյալ միակ ու հանգամանալից հոդվածը, ինչպես արդեն ասացինք, պատկանում է նրանց գրչին:

Խոսելով Ի. Վեյսքհոպֆենի մասին, հեղինակները գրում են. «Ի.Ա. Վեյսքհոպֆենը տիրոլցի էր՝ ծնված 1779 թվականին»: Վեյսքհոպֆենի՝ մեզ հայտնի մի քանի կենսագրու–թյուններում, և նրա մասին գրված առանձին գրքում անգամ[1] ծննդյան թվականը հիշա–տակվում է 1778-1880 թթ. և այս թվականը կրկնվում է կայուն հետևողականությամբ: 1779 թվականի մասին ոչ ոք երբևէ չի խոսել, իսկ հոդվածի հեղինակները շրջանառության մեջ դնելով այս նոր թվականը, ցավոք, իրենց աղբյուրը չեն հիշատակել:

«1813 թվականի հունվարի 23-ին լույս է ընծայվում «Восточные известия»-ի առաջին համարը»: Խնդրո առարկա պարբերականի առաջին համարը լույս է տեսել հունվարի 29-ին, չորեքշաբթի և ունի «Восточные известия 1813 года, середа, генваря, 29-го дня» վերտա–ռությունը: Հոդվածագիրների հիշատակած թվականը սիրով կհամարեինք պատահական անճշտություն, բայց սխալ նշված թվականից արվում է նաև սխալ եզրակացություն: Անմի–ջապես հետո կարդում ենք. «Այդ թվականին լույս է տեսնում թերթի 43 համար»: Մինչդեռ այդ՝1813 թվականին, հրատարակվում է թերթի 49 համար (1814 և 1815 թվականներին 52-ական և վերջին՝ 1816 թվականին՝ 27 համար):

Եվ վերջապես՝ կասկած հարուցող չէ «Восточная известия»-ի դադարի պատճառը: Հայտնի է, որ որոշակի բարեկեցության հասած ու իր շաբաթաթերթի համար հրատա–րակչական կայուն հենարան ստեղծած Վեյսքհոպֆենի գործերը վերջին մի քանի ամիսնե–րի ընթացքում սկսում են վատանալ: Ֆինանսական խախտումների հետևանքով սկսվում է դատական պրոցես, որը քայքայում է այդքան լավ սկսված և հաջողությամբ շարունակվող խմբագրական-հրատարակչական գործունեությունը: Այնուհետև վրա է հասնում հրատա–րակչի մահը (1816 թ. հուլիսի 2) և դրանով էլ ավարտվում է ամեն ինչ:

Այսպես են նշում մեզ հասած բոլոր աղբյուրները և սա էլ հավելելով նորանոր փաս–տերով, հավաստում են Ոսկանյանն ու Գրիգորյանը: Սակայն փաստարկելուց հետո, հան–կարծ արվում է այսպիսի մի հայտարարություն. «Իհարկե սխալ կլինի թերթի փակումը բա–ցատրել միայն խմբագրի մահով: Ռուսաստանում սկսվող ռեակցիան, կուլտուրայի դեմ ուղղված հարձակումները, նյութական պայմանների սահմանափակությունը, ինչպես նաև

[1] А.Дмитриев, Записки для чтения (приложение к "Биржевым ведомостям"), С. Петербург, 1867 г., №№ 2,3. Г. Геннади, Справочный словарь о русских писателях и ученых, умерших в XVIII и XIX столетиях, т. I, стр. 137. Н.Леонтьев, Иосиф Антонович фон-Вейскгопфен..., Астрахань, 1885 г., 51 стр.

բնակչության անգրագիտությունն ու բաժանորդների պակասը վճռական պատճառ դարձան առաջին ռուս-հայերեն լրագրի փակման համար»: Մի հավաստում է սա, որն անպայման սխալ է: Նախ, XIX դարի առաջին կեսը Ռուսաստանի պատմության մեջ ամենևին էլ աչքի չի ընկնում «ռեակցիայով» կամ «կուլտուրայի դեմ ուղղված հարձակումներով»: Հիշենք, որ հենց այս ժամանակահատվածում Ժուկովսկին, Բատյուշկովն ու Բարատինսկին ռուսական եղերերգական պոեզիայի հիմնադիրները հանդիսացան, իսկ դեկաբրիստ բանաստեղծները (Ռաևսկի, Կյուխելբեկեր, Բեստուժև-Մառլինսկի) նոր աստիճանի բարձրացրեցին ռուսական քաղաքացիական բանաստեղծությունը: Հիշենք, որ զարգացման տարբեր մակարդակներով հանդերձ, իրենց ստեղծագործական զենիթում էին գտնվում Կռիլովն ու Գրիբոյեդովը, Պուշկինն ու Լերմոնտովը, Գոնչարովը, Տուրգենևը, Դոստոևսկին, իսկ գրականագիտական-հրապարակախոսական բնագավառը վստահորեն իրենց ձեռքն էին վերցրել Գերցենն ու Բելինսկին:

Հաջորդը, ասացինք արդեն, որ Ի. Վեյսքհոպֆենը, մանավանդ կյանքի վերջին տարիներին արդեն դասվում էր Աստրախանի անվանի մարդկանց շարքը: Նրան էին տրված տեղի գիմնազիայի ֆրանսերեն և գերմաներեն լեզուների դասերը՝ 800 ռուբլի տարեկան աշխատավարձով, նա մասնավոր պարապմունքներ ուներ քաղաքի մի քանի հարուստների տներում, և 1816 թվականին ներկայացրել էր իր գործերը Կազանի համալսարան՝ գիտության դոկտորի աստիճան ստանալու համար: Այնպես որ, նյութական վիճակի մասին խոսք լինել չէր կարող:

Եվ վերջապես, վիճարկման ենթակա չէ, որ «Восточные известия» շաբաթաթերթը լայնորեն տարածվել է ոչ միայն Աստրախանում, այլև Ռուսաստանի ներքին նահանգներում, և ոչ միայն բաժանորդի պակաս չի ունեցել, այլ հակառակը, շատ բաժանորդներ ունենալու պատճառով նույնիսկ հարուցել է չինովնիկների անհանգստությունը: Ասվածից պարզ է, որ շաբաթաթերթի փակման պատճառը սոսկ և միայն ներքին-անձնական բնույթի հարցերն էին և այդ ամենին հասարակական-քաղաքական երանգավորում տալը չի համապատասխանում իրականությանը:

Այժմ անդրադառնանք Աստրախանում հայերեն լեզվով պարբերականի հրատարակության հարցին:

Հիմնադրելով իր շաբաթաթերթը, Ի. Ա.Վեյսքհոպֆենը սկզբից ևեթ փայփայում էր մի նպատակ. ռուսերեն լեզվով հրատարակվող «Восточные известия»-ում զետեղել նաև հայե–

րեն հոդվածներ: Աստրախանի և Կազանի ղեկավարությունը տալիս է իր համաձայնու–թյունը, սակայն մի՝ առարկություն չընդունող պայմանով. հայերեն հոդվածները պետք է լի–նեն ռուսերենի ճշգրիտ ու անփոփոխ թարգմանությունները: Այս գործը ճշտորեն իրակա–նացնելու համար, չվստահելով Վեյսքհոպֆենին և նրա հայազգի օգնական Կղեմես Շահ–վերդյանին, նշանակվում է նույնիսկ հատուկ աշխատող՝ դպրոցի տեսուչ Եգուլովը, որը պետք է համեմատեր հայերեն և ռուսերեն թարգմանությունները: Այս պաշտոնն անգամ սեփական անվանում ուներ՝ «сличитель текстов»: Եվ պարբերականի հրատարակությունն սկսելուց մոտ երկու տարի անց՝ 1815 թվականի № 42-ում, տպագրվում է առաջին հայերեն նյութը, ավելի ճիշտ՝ ռուսերեն հայտարարության հայերեն բառացի թարգմանությունը, զե–տեղված ռուսերեն բնագրին զուգահեռ: Հայտարարության հեղինակ Ի. Վեյսքհոպֆենը ծա–նուցում է իր ընթերցողներին, որ ինքը երեք շաբաթվա ջանքերից հետո ի վերջո կարողացել է հասնել նրան, որ «Ի լոյս ածիցեմ զծանուցմունս Արևելեանս թարգմանութեամբ հանդերձ ի հայ բարբառ» և խնդրում է «յարգելագունեղ հասարակութեանդ» նոր եռանդով բաժա–նորդագրվել իր շաբաթաթերթին: Այս հայտարարությունը նույնությամբ կրկնվում է «Вос–точные известия»-ի №№ 43-49 համարներում (բացի № 46), իհարկե, իր ռուսերեն բնագրի հետ մեկտեղ: 1815 թվականի № 50-ում հանդես է գալիս նոր, նախորդից անհամեմատ փոքր մի հայտարարություն, պարբերականի «կանթորը» (контора) տեղափոխելու մասին, որը նույնպես հանդիսանում է ռուսերենի ճշգրիտ թարգմանությունը և նույնությամբ կրկնվում է շաբաթաթերթի հաջորդ երկու համարներում: Շաբաթաթերթի «ամենահայաշատ» հա–մարը վերջին՝ 1816 թվականի № 27-ն է, որը գրեթե կիսով չափ հայկական է: Այդ համարի լուսապատճենն էլ, ի դեպ, իրենց հոդվածում դիվանագիտորեն զետեղել են Վ. Ոսկանյանն ու Վ. Գրիգորյանը, ստեղծելու համար այն տպավորությունը, որ «Восточные известия»-ն հրատարակվում էր նաև հայերեն: Այստեղ զետեղված են «Յաղագս գործառութեանց բա–րուց և վարուց Մօնղոլաց» հոդվածի շարունակությունը, որը սկսել էր հրատարակվել № 25-ից և մի քանի մանր գործեր: Ինչպես և նախորդ դեպքերում, բոլոր նյութերն էլ տպագրված են ռուսերեն բնագրերին զուգահեռ: Սրանք են, ահա, այն բոլոր հայերեն նյութերը, որոնք երբևէ զետեղված են եղել մոտ երեք ու կես տարվա հրատարակչական տևողություն ունե–ցած պարբերականում: Ենթադրել, որ Վեյսքհոպֆենը իր ռուսական թերթից դուրս ու ան–կախ հրատարակել է մեկ այլ, բուն հայկական թերթ, անմտություն կլինի, որովհետև այդ միտքը հաստատող և ոչ մի փաստ չունենք: Ավելին, վերևում բերված ցիտատը ուշադրու–թյամբ կարդալիս որոշակիորեն երևում է, որ Վեյսքհոպֆենը նպատակ էլ չի ունեցել ինք–նուրույն հայկական թերթ հրատարակելու, այլ պարզապես ձգտել է հասնել նրան, որ կա–

րողանա մեկ-երկու հայերեն հոդվածներ զետեղել իր թերթում, ինչին և հասել է: Բայց չէ՞ որ սա ամենևին էլ չի նշանակում, որ ռուսական «Восточные известия»-ն դարձավ հայերեն թերթ կամ առավել ևս Աստրախանում սկսեց ինքնուրույն հայկական պարբերական հրա–տարակվել: Կարիք կա՞ արդյոք ապացուցելու, որ եթե ռուսական թերթը իր էջերում երբեմն զետեղում է մի քանի հայերեն նյութեր, ըստ որում դրանցից ոչ մեկը ինքնուրույն չէ, այլ սոսկ բառացի թարգմանություն, ապա այդ երևույթը դիտել որպես հայալեզու նոր պարբե–րականի սկիզբ, նշանակում է կոպիտ սխալ թույլ տալ:

Բերենք փոքր-ինչ ժամանակակից, բայց բնորոշ մի օրինակ: Մոսկվայում կայացած Հայկական առաջին տասնօրյակի ժամանակ «Պրավդա»-ի 3-4-րդ էջերը հրատարակվում էին հայերեն լեզվով: Եվ այսպես՝ 10 օր շարունակ: Բայց չէ՞ որ ոչ ոք չի պնդի, որ այդ ժամա–նակվանից սկսած «Պրավդան» դարձավ հայկական օրաթերթ:

Համանման մի երևույթի հետ էլ գործ ունենք և այս դեպքում: Ռուսական «Восточные известия» թերթի էջերում հայերեն հոդվածների հանդես գալը ոչ նշանակում է, որ այդ թեր–թը ինչ-որ չափով փոխեց իր նախնական ուղղվածությունը, և ոչ էլ առավել ևս, ապացույց է ինքնուրույն հայկական պարբերականի գոյության:

Ամփոփելով՝ կարելի է ասել հետևյալը: Վեյսքհոպֆենի «Восточные известия»-ն 1815 թ. № 42-ից սկսած, անկանոն պարբերականությամբ հրատարակում է որոշ հայերեն նյութեր, ընդհուպ մինչև իր գոյության վերջը. մի երևույթ, որն ինքնըստինքյան անշուշտ հետաքրքիր է: Բայց դա ամենևին էլ ինքնուրույն հայերեն պարբերականի գոյության ապացույց լինել չի կարող: Աստրախանում հրատարակված ռուսական առաջին հայ պարբերականի պատ–մությունը, որն այնպես տարածում գտավ վերջերս, ցավոք, պետք է դասել անստույգ լե–գենդների շարքը:

1966 թ.